

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Նոյեմբերի երկրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոյեմբերի երկրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում նորմայից բարձր է եղել 3-5 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են նոյեմբերի առաջին հնգօրյակում. Տավուշում գրանցվել է +20...+22^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +15...+17^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +19...+21^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +23...+25^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +20...+22^{0}C, Շիրակում՝ +12...+16^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +12...+14^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +15...+17^{0}C, Գեղարքունիքում՝ +13...+17^{0}C, Լոռիում՝ +19...+21^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +18...+20^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +12...+14^{0}C, նախալեռներում՝ +16...+19^{0}C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են նոյեմբերի 19-ին և 20-ին. Տավուշում գրանցվել է +3...+6^{0}C (Դիլիջան՝ +1^{0}C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -2...-4^{0}C, նախալեռնային շրջաններում՝ -1....+1^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +2...+5^{0}C, նախալեռնային շրջաններում՝ 0...+2^{0}C (Սիսիան՝ -8^{0}C), Շիրակում՝ -2...-4^{0}C (Գյումրի՝ -8^{0}C, Աշոցք՝ -12^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ -5...-7^{0}C (Ֆանտան՝ -1^{0}C), նախալեռնային շրջաններում՝ -1...+1^{0}C, Գեղարքունիքում՝ -3...+1^{0}C (Գավառ, Մասրիկ՝ -8^{0}C), Լոռիում՝ -6...-10^{0}C (Վանաձոր՝ -4^{0}C, Օձուն՝ +1^{0}C), Արմավիրում՝ 0...-2^{0}C, Արարատում՝ -2...+1^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -7...-9^{0}C, նախալեռներում՝ -1...+3^{0}C:

Ողջ տասնօրյակի ընթացքում թույլ տեղումներ դիտվել են միայն նոյեմբերի 15-17-ին: Տեղումների գումարային քանակը կազմել է 2-6մմ, ինչն ընդհանուր առմամբ կազմում է ամսական նորմայի 2-15%-ը: Լոռիում ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ տասնօրյակում տեղումներ չեն դիտվել:



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են նոյեմբերի 20-ին. լեռնային շրջաններում՝ -4...-9^{0}C, տեղ-տեղ՝ -10...-12^{0}C, նախալեռնային և հովտային շրջաններում՝ -3....+1^{0}C:



Հողի արդյունավետ խոնավության պաշարները լեռնային շրջաններում հողի 20սմ խորության վրա կազմել են 10-25%, նախալեռնային շրջաններում՝ 13-25%, հովտային շրջաններում՝ 15-30%: Հողի 40սմ խորության շերտում լեռնային շրջաններում կազմել են 15-25%, նախալեռնային շրջաններում՝ 15-30%, հովտային շրջաններում՝ 17-35%:

Աշնանացան ցորեն

Նոյեմբերի երկրորդ տասնօրյակում աշնանացան ցորենի վեգետացիան լեռնային շրջաններում դադարել է, նախալեռնային շրջաններում բույսի աճ տեղի է ունենցել միայն ցերեկային ժամերին, իսկ հավտային շրջաններում վեգետացիան դեռ շարունակվել է:

Առանձին լեռնային շրջաններում (Գյումրի, Սիսիան, Մասրիկ) աշնանացանը թփակալել է, մնացած շրջաններում այն գտնվել է երրորդ տերևի և հանգուցային արմատի առաջացման փուլերում:

Աշնանացանի բարձրությունը տասնօրյակի վերջին կազմել է 14-26սմ:

Տասնօրյակի ընթացքում որոշ լեռնային շրջաններում հողի մակերևույթին դիտված բացասական ջերմաստիճանները (-4…-9^{0}C, տեղ-տեղ -10…-12^{0}C) և ձյունածածկույթի բացակայությունը վտանգավոր էին թերզարգացած աշնանացանի համար:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ